ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 10, 1956 Общественные науки

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

Ա. Ադամյան

ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆԻ ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ԳՈՐԾԸ

Հայտնի է, որ բանաստեղծ Ավետիք Իսահակյանը սովորել է Գևորգյան ճեմարանում։ Ճեմարանի ամբողջ արխիվը և աշակերտական գործերը գտնվում են Հայկական ՍՍՌ Պետական Մատենադարանում։

Գևորգյան ճեմարանի աշակերտական գործերի թվում գտնվում է նաև մեծ բանաստեղծ Ավետիք Իսահակյանի աշակերտական գործը։ Այստեղ զետեղված են մի քանի փաստաթղթեր, որոնցից ուշադրության արժանի են նախ բանաստեղծի հոր՝ Սահակ Իսահակյանի 1889 թ. օգոստոսի 13-ին, Ալեքսանդրոպոլից, Մակար կաթողիկոսին ուղղած դիմումը, որով հայտնում է, որ իր որդին սովորել, ավարտել է Հառեճի դպրոցը և բուռն ցանկություն ունի շարունակելու ուսումը Գևորգյան ճեմարանում։ Դիմումում նշում է նաև իր ընտանիքի բազմանդամ լինելը և իր միջոցով որդուն ուսման տալու դժվարությունը։

Դիմումի մեջ ասված է.

«Ի սրտէ ցանկանալով իմ, զի հարազատ որդի իմ Աւետիսն ըստ պատշաճին զարգասցի ի հրահանգս կարևոր ուսման, ի մանկութենէ հետէ ետու գնա յուսումն ի ժառանգաւորաց դպրանոցի ընկերութեան մենաստանին Հառիճոյ։ Յօրէ յայնմանէ սկսանելով նորա զուսումնառութիւնն ի ներկայ ուսումնական տարեշրջանի աւարտեաց զընթացս նորին, ուստի նկատելով ի նա զփափագ շարունակութեան և կատարելագործութեան ուսման և գոլով իմ ծանրաբեռնեալ բազմութիւ գերդաստանեօք անզօր գտանիմ լնուլ զանհրաժեշտ կարիս դաստիարակութեան զաւակաց իմոց. վասնորոյ խոնարհաբար խնդրեմ զՇայրագոյն տնօրէնութիւն Վեհափառութեան Ձերոյ վասն ընդունելոյ գնա ի թիւս սանուց ճեմարանի Ս. Էջմիածնի...»[1]։

Ուշագրավ է նաև 1801 թ. մարտի 30-ի Գևորգյան ճեմարանի կողմից աշակերտ Ավետիք Իսահակյանին տրված վկայականը, որից պարզվում է, որ նա 1889 թ. սեպտեմբերին ենթարկվել է քննության և ընդունվել Գևորգյան ճեմարանի երրորդ դասարանը որպես գիշերօթիկ աշակերտ։

Վկայականում նշված է նաև, որ 1890 թ. հունիսին նա փոխադրվել է չորրորդ դասարան և 1891 թ. մարտ ամսին, իր ցանկությամբ, ազատվել է ճեմարանից։

Այդ մասին վկայականում գրված է.

«Մատուցող սորին աշակերտ չորրորդ դպրոցական դասարանի Հոգևոր ճեմարանի Մայր Սբ.Աթոռոյ Ս. Էջմիածնի Աւետիք Իսահակյան Ալեքսանդրապոլցի յամսեանն սեպտեմբերի 1889 ամի ընկալեալ եղև ի թիւս աշակերտաց Դպրոցիս, և ըստ նախընթաց հարցաքննութեան՝ եմուտ յերրորդ դասարան։ Յամսեանն յունիսի 1890 ամի փոխադրեցաւ ի չորրորդ դասարան և յամսեանն մարտի 1891 ամի ըստ յօժարկամաց իւրոց արձակեցաւ ի ճեմարանէս։ Ի վարս յոյժ գովելի էր նա։ Ի ստուգութիւն որոյ յՈւսումնական Խորհրդոյ Դպրոցիս տուաւ նմա վկայականս այս պարտ և պատշաճ ստորագրութեամբ և դրոշմելով կնքոյ ճեմարանիս»[2]։

Ինչո՞ւ ուսման մեծ փափագ ունեցող աշակերտ Ավետիք Իսահակյանը դուրս է եկել Գևորգյան ճեմարանից։

Պարզվում է, որ 1891 թվականին Գևորգյան ճեմարանի աշակերտների մեջ դժգոհություններ ու հուզումներ են առաջ եկել, ճեմարանում դասավանդվելիք առարկաների սխոլաստիկ բնույթի, սահմանված դաժան ռեժիմի և ռեակցիոն հայացքներ ունեցող դասախոսների կապակցությամբ։ Հուզումներին մասնակցել են ճեմարանի մի շարք աշակերտներ, որոնց թվում նաև Ավետիք Իսահակյանը։ Ճեմարանի վարչությունը հետապնդում և հալածում էր այդպիսի-

---

[1] Հայկական ՍՍՌ Պետական Մատենադարան, Արխիվային բաժին, Գևորգյան ճեմարանի արխիվ, թղթ. № 6, վավ. № 41, էջ 3։

[2] Նույն տեղում, էջ 7։

ներին, որի պատճառով Ավետիք Իսահակյանը ստիպված թողնում, հեռանում է ճեմարանից։ Ճեմարանից հեռանում են նաև ուրիշ աշակերտներ։ Աշակերտության միջավայրում առաջացած գժգոհությունները և հուզումները նկատի ունենալով ճեմարանի վարչությունը, հետագայում որոշ փոփոխություններ է մտցնում դասավանդվելիք առարկաների, դասախոսական կազմի և աշակերտների նկատմամբ վարչության կողմից սահմանված ռեժիմի մեջ։

Հիշյալ փոփոխություններից հետո, Ավետիք Իսահակյանը դիմում է Գևորգյան ճեմարանի վարչությանը՝ իրեն ճեմարան վերընդունելու համար։ Այդ մասին նա իր 1891 թ. օգոստոսի 1-ի դիմումի մեջ, որը նույնպես պահվել է նրա աշակերտական գործում, դրում է Սինոդի Ատենադպրի տեղակալ Երեմիա եպիսկոպոսին։

«Անկասկած հայտնի կլինին Ձերդ Սրբազնությանը ճեմարանի աղմկալի խռովությունները, որոնք շատերի արձակման պատճառն եղան։ Հայտնի կլինին նույնպես, որ այդ աշակերտներին ճեմարանից հեռացնողը նույն տեղի շնորհունակ սարկավագների անտեղի կասկածներն էին, որոնք յուրյանց ժամանակում մեծ գին ունեին վարչության աչքին։

Ես՝ ճեմարանի Դ. դասարանի սաներից մեկը, ինքնաստեղծ կասկածներին ենթարկվելուց վախենալով՝ վաղորոք թողի հուզված ճեմարանը, միակ օրինավոր վկայականից չզրկվելու համար։ Բայց, որովհետև այժմ ճեմարանը բարեխնամ հոգատարներիդ՝ Ձերդ գերապատվության և սրբազան տեսչի հսկողությամբ ազատ է խռովություններից, ուստի ուսանելու ջերմ ցանկությամբ դիմում եմ Ձերդ ողորմածությանը ճեմարանի մայրագույթ որդեգրությունը խնդրելով»[1]։

1891 թ. նոյեմբերի 20-ին, ճեմարանի ուսուցչական ժողովը իր յոթերորդ նիստում քննության առնելով Ա. Իսահակյանի հիշյալ դիմումը, որոշում է. վերընդունել Ավետիք Իսահակյանին ճեմարան, այն պայմանով, որ նա քննություններ հանձնի չորրորդ դասարանի երկրորդ կիսամյակում և հինգերորդ դասարանի առաջին կիսամյակում անցած այն բոլոր առարկաներից, որոնք անցել են իր բացակայության ժամանակ։ Այդ մասին արձանագրության մեջ գրում են.

«...Լուան զխնդիր նախկին սանու ճեմարանի Աւետիքայ Իսահակեան, տուեալ յանուն ամենապատիւ սրբազան տեղակալի։ Ի վերայ խնդրոյն նորին սրբազնութիւնն մակագրեալ էր. «Յանձնեմ վարչութեան ճեմարանիդ ընդունել զխնդրատու նախկին աշակերտին ճեմարանիդ»։

Որոշեցին տալ Աւետիքայ Իսահակեան ժամանակ ց 15 դեկտեմբերի տարւոյս, զի նա տացէ զքննութիւն յամենայն առարկայից չորրորդի դասարանի այնու չափով, զոր ուսեալ են ընկերք նորա ցվախճան ուսումնական ամի, իսկ զկնի 15 դեկտեմբերի ցսկսանել երկրորդ ուսումնական կիսամեկի տալ զքննութիւն յամենայն առարկայից հինգերորդի դասարանի այնու չափով, զոր ուսեալ են աշակերտք հինգերորդի դասարանի յառաջին ուսմ. կիսամեկի։ Ի հակառակ դեպս թողուլ զնա ի չորրորդում դասարանի»[2]։

Ա. Իսահակյանը բոլոր առարկաներից քննությունները հանձնելուց հետո վերընդունվում է ճեմարանի հինգերորդ դասարան և ճեմարանում սովորում մինչև արտասահման մեկնելը։

Բանաստեղծի աշակերտական գործում գտնվում է նաև նրա 1892 թվականի նոյեմբերի 18-ին Թիֆլիսից Էջմիածնի Գևորգյան ճեմարանի վարչության անդամներից մեկին ուղղած դիմումը, որից երևում է, որ նա հիշյալ թվականին աշխատել է արտասահմանի անցագիր ձեռք բերել արտասահմանում սովորել գնալու համար։

«Խոնարհաբար խնդրում եմ,— գրում է բանաստեղծը,— Հայր Լևոն Խոջոյանի հասցեով Թ.ֆլիս ուղարկեք իմ մետրիքականն ու ծաղկի վկայականը։

Խնդրում եմ անտես չառնեք, որովհետև արտասահմանի անցագիր ստանալու համար անհրաժեշտ է»[3]։

Ա. Իսահակյանը անցագիրը ստանալուց հետո 1893 թվականին մեկնում է Գերմանիա բարձրագույն կրթություն ստանալու։

Մեծ բանաստեղծի աշակերտական գործում եղած վերոհիշյալ վավերագրերը արժեքավոր փաստեր են նրա ուսանողական շրջանի որոշ հարցեր լուսաբանելու տեսակետից, ուստի և անհրաժեշտ համարեցինք նրանք հասարակության լայն շրջանի սեփականությունը դարձնել։

---

[1] Հայկական ՍՍՌ Պետական Մատենադարան, Արխիվային բաժին, Գևորգյան ճեմարանի արխիվ, թղթ. № 6, վավ. № 41, էջ 5։

[2] Նույն տեղում, թղթ. № 26, վավ. № 231։

[3] Նույն տեղում, թղթ. № 6, վավ. № 41, էջ 9։